# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Հայրավանք
համայնք, .

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ

N ԱԳ-138
*30 դեկտեմբերի 2019թ.*

Հարգելի պարոն Խլղաթյան,

Ձեզ ենք ներկայացնում 2019 թվականի Հայրավանք համայնքի ավագանու հերթական նիստի որոշումները:

Առդիր՝ 13 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*Կատ. Առաջին կարգի մասնագետ՝*

*Կ. Թադևոսյան*

Scanned by CamScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Հայրավանք համայնք, հասցե Բարի գալուստի 17, հեռ. /094/ 47-17-10, էլ. փոստ. hayravanq.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«20»ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թ. N 22

## ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ «20»ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2019թ . ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով Հայրավանք համայնքի ավագանին որոշեց հաստատել Հայրավանք համայնքի ավագանու 20 դեկտեմբերի 2019թ.թիվ 5 նիստի օրակարգը՝

1. Հայրավանք համայնքի տարածքում 2020թ. համար սահմանված տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը որոշելու մասին:
2. Հայրավանք համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2020թ. հունվարի 1-ի դրությամբ հաստատելու մասին:
3. Հայրավանք համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2020թ. համար սահմանելու մասին:
4. Հայրավանք համայնքի 2020թ. բյուջեի նախագիծը հաստատելու մասին
5. Հայրավանք համայնքի գույքագրման փաստաթղթերը հատատելու մասին:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ(3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎՇԱՏ ՕՀԱՆՅԱՆ

ԴԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Scanned by CamScanner

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Հայրավանք համայնք, հասցե Բարի գալուստի 17, հեռ. /094/ 47-17-10, , էլ. փոստ. hayravanq.gegharquniq@mta.gov.am


## ՈՐՈՇՈՒՄ

### Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի ավագանու
### «20» Դեկտեմբերի 2019թ. թիվ 23-Ն

### ՀԱՅՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020թ. ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության 18-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 2) կետերի, ,,Տեղական տուրքերի և վճարների մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,10-րդ, 11-րդ, 12-րդ, հոդվածների դրույթներով, Հայրավանք համայնքի ավագանին որոշում է.

1.Սահմանել 2020թ. տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը

| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ ԱՅԴ ԹՎՈՒՄ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ | ՍԱՀՄԱՆՎՈՂ ԳՈՒՄԱՐԸ |
|---|---|---|
| 1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար | | |
| Հիմնական շենքերի և շինությունների համար՝ | | |
| ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ | 15000 | 15000 |
| բ) սույն կետի 1) ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | | |
| բա. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30000 դրամ | 30000 | 30000 |
| բբ. 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ | 50000 | 50000 |
| բգ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 դրամ | 50000 | 50000 |
| բդ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 դրամ | 100000 | 100000 |

Scanned by CamScanner

| | | |
|---|---|---|
| Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար | | |
| գ. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 դրամ | 3000 | 3000 |
| դ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 դրամ | 5000 | 5000 |
| 2. Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | | |
| ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ | 3000 | 3000 |
| բ) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վենակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մասի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով | | |
| գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ն կետով սահմանված նորմերը | | |
| 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբեկտների քանդման (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ 5000 դրամ | 5000 | 5000 |
| 4. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար 100000 դրամ | 100000 | 100000 |
| 5. ՀՀ կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբեկտներում տեխնիկական հեղուկներ վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար 20000 դրամ | 20000 | 20000 |
| 6. Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված | | |

Scanned by CamScanner

| | | |
|---|---|---|
| իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար 50000 դրամ | 50000 | 50000 |
| 7. Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկահոլային խմիչքների և (կամ) ծախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ | | |
| 1) ոգելից և ալկահոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001 դրամ | 0-10001 | 1500 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ | 10001-13001 | 10001 |
| գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ | 13001-20001 | 13001 |
| դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ | 20001-25001 | 20001 |
| ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ | 25001-45001 | 25001 |
| զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 դրամից մինչև 100001 դրամ | 45001-100001 | 45001 |
| 2) Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ մինչև 10001 դրամ | 0-10001 | 1500 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 դրամից մինչև 13001 դրամ | 10001-13001 | 10001 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13001 դրամից մինչև 20001 դրամ | 13001-20001 | 13001 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20001 դրամից մինչև 25001 դրամ | 20001-25001 | 20001 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25001 դրամից մինչև 45001 դրամ | 25001-45001 | 25001 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45001 | 45001-100001 | 45001 |

Scanned by CamScanner

| | | |
|---|---|---|
| դրամից մինչև 100001 դրամ | | |
| 8. Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում ,,Առևտրի և ծառայությունների մասին,, ՀՀ օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար | 350 | 350 |
| 9. Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար | | |
| 1) առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազարից մինչև հիսուն հազար դրամ | 5000-50000 | 5000 |
| 2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազարից մինչև հարյուր հազար դրամ | 25000-100000 | 25000 |
| 3) բաղնիքների (սաունաներին) համար՝ երկու հարյուր հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ | 200000-500000 | 200000 |
| 4) խաղատների համար՝ հինգ հարյուր հազարից մինչև մեկ միլիոն դրամ | 500000-1000000 | 500000 |
| 5) շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազարից մինչև հինգ հարյուր հազար դրամ | 250000-500000 | 250000 |
| 6) վիճակախաղերի համար՝ հարյուր հազարից մինչև հարյուր հիսուն հազար դրամ | 100000-150000 | 100000 |
| 10. Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝ | | |
| 1) հիմնական շինությունների ներսում | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մինչև 5001 դրամ | 0-5001 | 1500 |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝5001 դրամից մինչև 10001 դրամ | 5001-10001 | 5001 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10001 դրամից մինչև 15001 դրամ | 10001-15001 | 10001 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15001 դրամից մինչև 20001 դրամ | 15001-20001 | 15001 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝20001 դրամից մինչև 30001 դրամ | 20001-30001 | 20001 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝30001 դրամից մինչև 50001 դրամ | 30001-50001 | 30001 |
| 2) ոչ հիմնական շինությունների ներսում | | |
| ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի | 0-1001 | 1000 |

Scanned by CamScanner

| | | |
|---|---|---|
| օբյեկտի համար` մինչև 1001 դրամ | | |
| բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 1001 դրամից մինչև 2001 դրամ | 1001-2001 | 1001 |
| գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 2001 դրամից մինչև 4001 դրամ | 2001-4001 | 2001 |
| դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 4001 դրամից մինչև 8001 դրամ | 4001-8001 | 4001 |
| ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 8001 դրամից մինչև 15001 դրամ | 8001-15001 | 8001 |
| զ. 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար` 15001 դրամից մինչև 25001 դրամ | 15001-25001 | 15001 |
| 11. Ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան` համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար` | | |
| 1) ալկահոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երկու հազար դրամ | 2000 | 2000 |
| 2) թունդ ալկահոլային (սպիրտի պարունակությունը մինչև 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` երեք հազար հինգ հարյուր դրամ | 3500 | 3500 |
| 3) սոցիալական գովազդի համար զրո դրամ | 0 | 0 |
| 4) այլ արտաքին գովազդի համար` հազար հինգ հարյուր դրամ | 1500 | 1500 |
| 5) դատարկ գովազդային վահանակների համար` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 տոկոսի չափով | 375 | 375 |
| 6) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը` համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 տոկոսի չափով | 150 | 150 |
| 12. ՀՀ համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան` ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար` հարյուր հազար դրամ | 100000 | 100000 |
| 13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների, միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար` տաս հազար դրամ | 10000 | 10000 |

Scanned by CamScanner

| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | ԴՐՈՒՅՔԱՉԱՓ |
|---|---|
| 1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | |
| 2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | |
| 3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | |
| 4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. | |
| 5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 1000 դրամ |
| 6. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար համայնքի ավագանու կողմից սահմանվում է ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում | Բնակելի նշանակության շենքերի կամ կենցաղային աղբի համար յուրաքանչյուր բնակչի հաշվով ամսեկան 100 ՀՀ դրամ |
| 7. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է ,,Աղբահանության և սանիտարական մաքրման մասին,, ՀՀ օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում: Սույն կետով նախատեսված աղբի ծավալը կամ զանգվածն որոշելու (պարզելու) անհնարինության դեպքում, այդ թվում տեխնիկական աղբահանության վճարի հաշվարկը կատարվում է հետևյալ ամսական դրույքաչափերով | 1) ըստ ծավալի՝ 1մ³ աղբի համար՝ 2000 ՀՀ դրամ<br>2) ըստ զանգվածի՝ 1տ աղբի համար՝ 6000 ՀՀ դրամ |
| 1) Առևտրի (այդ թվում շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ իրականացվող շինությունների | Մինչև 25քմ համար 500 ՀՀ դրամ, |

Scanned by CamScanner

| | |
|---|---|
| մասով՝ | 26-50քմ 1000 ՀՀ դրամ,<br>51քմ և ավելի 2000 ՀՀ դրամ |
| 2) Հյուրանոցների և հյուրանոցային ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ | 1քմ համար 10 ՀՀ դրամ |
| 3) Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով՝ | 1քմ համար 4 ՀՀ դրամ |
| 4) Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ | 1քմ համար 3 ՀՀ դրամ |
| 8. Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով | |
| 9. Համյնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափով | |

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձաքննության անցնելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ(3) Դեմ () Ձեռնպահ ()

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎՇԱՏ ՕՀԱՆՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Scanned by CamScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

[illegible] Հանրապետության Գեղարքունիքի մարզի
[illegible] համայնք, հասցե [illegible] 17, հեռ. /094/ 47-17-10, էլ. փոստ hayravanq.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«20» Դեկտեմբերի 2019թ. N 24- Ն

## ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով ՏԻՄ օրենքի 15-րդ հոդվածի 8-րդ կետի դրույթներով համայնքի ավագանին որոշեց*

1. Հայրավանք համայնքի ղեկավարի վարձատրության չափը 2020 թվականի համար սահմանել ամսական 200000 (երկու հարյուր հազար) դրամ:

*2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձաքննություն անցնելու օրվան հաջորդող օրվանից.*

*Կողմ(3)* *Դեմ ()* *Ձեռնպահ ()*

*ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

*ԱՐԵՎՇԱՏ ՕՀԱՆՅԱՆ*

*ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ*

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝* *ՍԱՄՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ*

*08407035*

Scanned by CamScanner

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Հայրավանք համայնք, հասցե Բարի գյուղատի 17, հեռ. /094/ 47-17-10, էլ. փոստ. hayravanq.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«20» Դեկտեմբերի 2019թ. թիվ 25-Ն

## ՀԱՅՐԱՎԱՆՔ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ կետի և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի դրույթներով համայնքի ավագանին սահմանել և հաստատել համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

1.Աշխատակիցների թվաքանակը 11

2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ հազ.դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 200.0 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 110.0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 100.0 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 150.0 |
| Առաջատար մասնագետ | 1 | 135.0 |
| Առաջատար մասնագետ | 1 | 135,0 |
| 1-ին կարգի մասնագետ | 1 | 110,0 |
| 1-ին կարգի մասնագետ | 1 | 110,0 |
| ՏԵԽՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Պահակ | 1 | 90.0 |
| Հավաքարար | 1 | 90.0 |
| Անասնաբույժ | 1 | 78 |
| Ընդամենը | 11 | 1308.0 |

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձաքննություն անցնելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ(3) Դեմ() Ձեռնպահ ()

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎՇԱՍ ՕՀԱՆՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՍԱՄՈՒԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*08407035*

Scanned by CamScanner

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Հայրավանք համայնք, հասցե Բարի գյուղատի 17, հեռ /094/ 47-17-10, էլ. փոստ hayravanq.gegharquniq@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«20» Դեկտեմբերի 2019թ. N 26 - Ն

## ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի և « Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ և 32-րդ հոդվածի դրույթներով

1. Հաստատել Հայրավանք համայնքի 2020թ. բյուջեի նախագիծը՝
   ա/ եկամուտների գծով՝ 23.269.2հազ. դրամ
   բ/ ծախսերի գծով՝ 25.285.6հազ. դրամ
   գ/ հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասուրդը/՝ 2.016.4հազ. դրամ
2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի.
3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակրարգման՝ համաձայն հատված 2-ի.
4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակրարգման՝ համաձայն հատված 3-ի.
5. Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդը կամ դեֆիցիտը / պակասուրդը/՝/ համաձայն հատված 4-ի.
6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի / պակասուրդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի.

Ֆոնդային բյուջեի 2019թ. տարեվերջի մնացորդը՝ 2.016.4 հազ. 22 դրամ, որից 1.900.0 հազ. դրամը 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5112 տնտեսագիտական գործառնական դասակարգմամբ ուղղել հոդվածին, որպես շենքերի և շինությունների շինարարության վճար, 116.4 հազ. դրամը ուղղել 01 բաժնի 06 խմբի 01 դասի 5134 տնտեսագիտական գործառնական դասակարգմամբ հոդվածին, որպես նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման վճար,

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական և գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի.
8. Սահմանել վարչական բյուջեի պահուստային ֆոնդը 1.4751/մեկ միլիոն չորս հարյուր յոթանասունհինգ հազար մեկ հարյուր / դրամ՝
9 «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն
ա/ թույլատրել համայնքի ղեկավարին կատարել բյուջեով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի գծով սահմանված 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ՝ ըստ տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

Scanned by CamScanner

9. Սահմանել. որ բյուջեով նախատեսված ծախսային ծրագրերի միջև վերաբախշումների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել այդ ծրագրերի համար հաստատված ընդհանուր գումարի 15%:

10.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում փորձաքննություն անցնելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ(3) Դեմ () Ձեռնպահ ()

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎՇԱՏ ՕՀԱՆՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՍՈՒՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐԱՎԱՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Հայրավանք համայնք, հասցե Բարի գալուստի 17, հեռ. /094/ 47-17-10, , էլ. փոստ. hayravanq.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

**Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի ավագանու**
**«20» Դեկտեմբերի 2019թ. թիվ 27**

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ(3) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ՎԱՀԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐԵՎՇԱՏ ՕՀԱՆՅԱՆ

ՊԱՐԳԵՎ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՈՒԻՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Scanned by CamScanner